

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/5

23 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 05.12.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 01.12.2014 թ-ի թիվ 1585 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետը, քննարկելով «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 29.11.2014 թ-ի դրությամբ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ-ի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 6.122.990 դրամ: Ընդ որում հարկ է նշել, որ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 01.12.2014 թ-ի թիվ 1585 որոշմամբ գանձման առաջադրված գումարի հիմնական մասը, գումարով 6.000.000 դրամ, կազմում է ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6105048 ակտով առաջադրված պարտավորությունները:

Հարկ է նշել նաև, որ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ կողմից 09.12.2014 թ-ին ՀՀ վարչական դատարան հայցադիմում է ներկայացվել ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6105048 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանը 16.12.2014 թ-ին կայացրել է թիվ ՎԴ/6934/05/14 որոշումը, որի համաձայն «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6105048 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 01.12.2014 թ-ի թիվ 1585 որոշմամբ գանձման առաջադրված գումարի հիմնական մասը կազմում է ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 17.11.2014 թ-ի թիվ 6105048 ակտով (այսուհետ Ակտ) առաջադրված պարտավորությունները, ինչպես նաև այն, որ Ակտը վիճարկվում է դատական կարգով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև վարչական դատավարության կարգով Ակտի վերաբերյալ որոշում՝ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Արս Ֆրոզեն Ֆուդ» ՍՊԸ 05.12.2014 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

